

Գուրգեն Մուրադյան

ՄՍՈՐԳԵՏՆՅԱ (ԹՈՒՆԵԼԱՅԻՆ) ՈՎՁՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԻԵՏՆԱՄԱԿԱՆ ԵՎ ԱՖՂԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՁՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ԶՈՒԳԱԿՇԻՌ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր. անկանոն ստորաբաժանումներ, պարտիզանական պայքար, վիետնամական սինդրոմ, ջիհադ, օդային գերակայություն, աշխարհաքաղաքական հակամարտություններ:

Մուտք. Սառը պատերազմն իբրև տեղային առձակատումների դարաշրջան

Սառը պատերազմի դարաշրջանը երկու գերտերությունների միջև առձակատումնաբանական բացի աչքի ընկավ նաև մի շարք անկանոն զորամիավորումների և կանոնավոր բանակների միջև երկարատև պատերազմներով: Վիետնամական և աֆղանական պատերազմները հաճախ անվանվում են «անարդարացի պատերազմներ»¹: Այդ եզրույթները կիրառվել են մասնակից զինվորների կողմից: Հաճախ համեմատականներ էին անցկացվում Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ, որը համարվում էր «արդարացի պատերազմ»²:

Այդ հակամարտությունների ընթացքում ակնհայտ էր դառնում, որ դասական մարտավարական հնարքներն այլևս չեն գործում, և անհրաժեշտ է որոնել նոր լուծումներ:

Ամերիկյան զինված ուժերը Վիետնամում և խորհրդային ստորաբաժանումները Աֆղանստանում ականատես եղան զարմանալի մի երևույթի: Վիետկոնգի³ և մոջահիդների⁴ ստորաբաժանումները հաճախ խուսափում էին բացահայտ բախումներից՝ առաջնահերթություն տալով ստորգետնյա տեղաշարժերին և մոբիլ ռազմերթին:

Երկու պատերազմների ժամանակ անկանոն ստորաբաժանումների մարտավարական որոշ խնդիրների, ինչպես նաև հակառակորդի օդային գերակայությանը ստորգետնյա պայքարով պատասխանելու պատճառների և հետևանքների մասին կխոսվի ստորև:

1. «Թունելային առնետներն» ամերիկյան ռազմական մեքենայի կազմում

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հնդկաչինյան թերակղզում կազմավորվեց Վիետնամի ժողովրդավարական Հանրապետությունը: Վերջի-

¹ Վերոնյալ երկու պատերազմների միջև բազմաթիվ համեմատականներ են անցկացվել [Путашко М., Вьетнам-Афганистан... Две войны-два исторических урока// <https://ava.md/2014/01/09/v-etnam-afganistan-dve-voyny-dva-istoricheskikh/> (09.05.2018)]: Պատահական չէ, որ արևմտյան գրականության էջերում Աֆղանական պատերազմն անվանվում է «Արջի թակարդ» (Mohammad Yousaf, Mark Adkin: Afghanistan - The Bear Trap: The Defeat of a Superpower. Casemate, 2001, p. 159) կամ «խորհրդային միության Վիետնամական պատերազմ» (Cohen R., The Soviet» s Vietnam// Washington Post, April 22, 1988):

² «Արդարացի և անարդարացի պատերազմների» հղացքը բազմիցս քննվել է պատերազմների դասակարգման տիրույթում: Մանրամասն տե՛ս Van Crevelde M., The Transformation of War, New York, 1991, p. 101-135.

³ Հարավային Վիետնամի ազատագրության ժողովրդական ճակատը կամ Վիետկոնգը Հարավային Վիետնամի տարածքում 1960-1977 թթ. գործող ռազմա-քաղաքական կազմակերպություն էր: Նրա հիմնական նպատակը երկու Վիետնամների միավորումն էր: Արևմտյան զանգվածային լրատվական միջոցները այդ եզրույթի ներքո միավորում են վիետնամական կոմունիստներին և Հյուսիսային Վիետնամի մարտիկներին: 1977 թ. Վիետկոնգը լուծարվեց՝ մտնելով Վիետնամի հայրենական ճակատի կազմի մեջ: Ильинский М., Индокитай: Пепел четырех войн (1939-1979 гг.), М., Вече, 2000, с. 36-73.

⁴ Մոջահիդներ են անվանվում ջիհադի այն մարտիկները, ովքեր «առավելագույն ջանքեր էին գործադրում անհավատների դեմ քայքայ մղելիս»: Առավել կոնկրետ նկատի են առնվում խորհրդային զորքերի դեմ Աֆղանստանում պայքար մղած անկանոն ստորաբաժանումների մարտիկները: Քոթանջյան Հ., Սրբազան պատերազմի ազգաքաղականությունը Աֆղանստանի օրինակով// Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս- Աֆղանստան, Ե., 2009, էջ 228-242:

նիս հիմնումը սկիզբ դրեց երկարատև հակամարտության, որը տևեց երեք տասնամյակ և ավարտվեց երկու վիետնամական պետությունների վերամիավորմամբ:

1965 թ. մարտի 2-ին ամերիկյան ռազմաօդային ուժերն սկսեցին Հյուսիսային Վիետնամի ռմբակոծումը («Rolling Thunder» ռազմագործողություն), որով էլ սկիզբ դրվեց նրանց զորամիավորումների ինտերվենցիային (ներթափանցում) Հարավային Վիետնամի տարածքում: Սկզբնավորվեց արյունալի մի հակամարտություն, որն իր խորը հետքն է թողել ռազմարվեստի պատմության էջերում¹:

Հասարակական շրջանակներում վիետնամական պատերազմը ասոցիացվում է ջունգլիներում վարվող պատերազմի հետ, թեև իրական պատկերն այլ է: Ցամաքային պարտիզանական պատերազմը վիետնամական հակամարտության բաղադրիչներից միայն մեկն է և ամենևին էլ գլխավորը չէ:

Ամերիկյան ռազմագիտական դպրոցը սկզբնական շրջանում փորձ արեց օդային գերկայության շնորհիվ նվազագույն հետևակ ստորաբաժանումների կիրառմամբ հաղթանակի հասնել: Այդ մասին հետևություններ է արել հրեա նշանավոր ռազմական գործիչ Մոշե Դայանը, որն այդ տարիներին իբրև «Մասրիվ» թերթի թղթակից հետևում էր Հնդկաչին թերակղզու ռազմական գործողություններին: Մոշե Դայանի կենսագիր, նշանավոր ռազմական տեսաբան Մ. վան Քրեյլդը, խոսելով Դայանի այդ ուղևորության մասին, փաստում է. «Ժամանակի մեծագույն մասը նրանք ծանր մուրճերով հարվածներ էին հասցնում դատարկ տարածությանը: Դեռևս նրանց չէր հաջողվել թշնամուն հասցնել անվերականգնելի վնասներ, որն իր հերթին շարունակում էր ամրաշինական աշխատանքներ իրականացնել»²: Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ առանց ցամաքային ինտերվենցիայի անհնար է նշանակալի արդյունք արձանագրել:

Վիետնամական պատերազմի սկզբում ԱՄՆ զինվորական շտաբը՝ Ուիլյամ Վեստմորլանդի և Ռոբերտ Մաքնամարայի գլխավորությամբ, մշակել էր հարձակվողական մի մարտավարություն, որն ստացել էր «Գտնել և ոչնչացնել» անվանումը («Search and destroy» կամ «Seek and destroy»): Նախատեսվում էր հակառակորդի կողմից վերահսկվող տարածքում խոշոր ռազմական միավորումների հայտնաբերումից հետո օժանդակ զորաջոկատների հետ միասին իրականացնել վերջինիս ոչնչացումը: Նմանատիպ ռազմագործողություններ էին Յա-Դրանգի հովտի մարտերը 1965 թ. և «Համբուրգեր» ռազմագործողությունը 1969 թ.: Ընդհանուր առմամբ այս մարտավարությունը ձախողվեց Վիետնամի աշխարհագրական առանձնահատկությունների՝ ջունգլիների և լեռների պատճառով³:

Չախողման պատճառներից մեկը հենց Վիետնամում առկա ստորգետնյա թունելային ցանցն էր: Վիետկոնգի ստորաբաժանումները տեղաշարժվելիս ցուցաբերում էին զարմանահարաշ ճկունություն: Նրանք փորել էին ստորգետնյա թունելների լայնատարած համակարգ՝ հայտնի Կուտիի կամ Կու Չիի թունելներ անվամբ⁴:

Այս թունելների ցանցի ստեժման հիմնական պատճառները համարվում են ամերիկյան հետախուզական նորարար միջոցներից թաքնվելը և օդային ռմբահարումներից պաշտպանվելը: Սննդի, ռազմամթերքի, դեղորայքի և այլ պարագաների տեղափո-

¹ Վիետնամական պատերազմի մասին ստեղծվել է բազմահազար գրականություն: 1992 թ. տվյալներով արդեն առկա էր շուրջ 3500 միավոր ուսումնասիրություն, ինչպես այդ պատերազմի դեպքերի, այնպես էլ Հնդկաչինյան պատերազմների ժամանակ ԱՄՆ քաղաքականության վերաբերյալ: Մանրամասն տե՛ս America and the Indochina Wars, 1945-1990, Bibliographical Guide, by Lester H. Brune, Richard Dean Burns, New war/peace bibliography series, Regina Books, 1992.

² Martin Van Creveld, Why Iraq Will End as Vietnam Did, 18 November 2004 // <https://archive.lewrockwell.com/orig5/crevald1.html> 03.05.2018

³ Starry Donn A. GEN., Mounted Combat In Vietnam; Vietnam Studies. Department of the Army, 1978, p. 221.

⁴ St'e Mangold T., Penycate J., The Tunnels of Cu Chi, 2nd edition, NY: Random House, 1985.

խումից բացի՝ Կու Չի թունելները վերակազմակերպվել էին զինվորական շտաբների, որտեղից իրականացվում էր զորքերի կառավարումը¹:

Նրանց դեմ պայքարելու համար ամերիկացիները կիրառում էին մարտավարական երկու նորարարություններ: Սկզբնապես փորձ արվեց օգտագործել քիմիական զենք²: Այդ նպատակին էին ծառայում B-52 ռմակոծիչները³, որոնք օրական մի քանի թռիչքներ էին կատարում: Սակայն այս հնարը բավականին անարդյունավետ էր, քանի որ տուժում էին բավականին թվով անմեղ քաղաքացիներ, և ռմբահարումներն էլ հաճախ իրականացվում էին արդեն իսկ լքված տարածություններում⁴:

Այս մարտավարությանը փոխարինելու եկան հատուկ ստորաբաժանումներ, որոնք հայտնի էին «Թունելային առնետներ» անվամբ: Վերջիններիս կիրառումը դառնում էր առավել զանգվածային: Վերոնշյալ ստորաբաժանումների զինվորները ստիպված էին մարտական առաջադրանք կատարել հատուկ լապտերների և սպառազինության միջոցով: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Colt 45 և M 1911A1 ատրճանակներին, որոնք բավականին հարմար էին փակ տարածությունում կիրառման համար: Հետագայում տարածում ստացան Revolver տիպի թմբուկավոր ատրճանակները⁵: Ինչ վերաբերում է զինվորների սպառազինությանը, ապա պետք է նշել, որ նրանք զենքերից և փամփշտատուփերից բացի, իրենց հետ պարտադիր ունենում էին նաև պայթուցիկ սարքեր, պաշտպանիչ դիմակներ, զրահաբաձկոններ և այլ մի շարք պարագաներ՝ նախատեսված թունելային ցանցի աշխատանքը խափանելու համար: Լայնորեն կիրառվում էին նաև M 2 հրանետները (огнемёт): Թեև նրանք ավելի շատ հոգեբանական դերակատարում ունեին և նախատեսված էին վիետնամցիներին վախեցնելու համար: Բացի այդ՝ հրանետով զինված զինվորի խոցման պարագայում կարող էին տուժել մոտակա յուրային զինծառայողները⁶:

Ընդհանուր առմամբ ամերիկացիները, հաղթանակ տանելով մարտադաշտում, պարտություն կրեցին տեղեկատվական ասպարեզում, որովհետև ի սկզբանե սխալ մարտավարությամբ էին պայքարում անկանոն ստորաբաժանումների դեմ:

2. «Կատակոմբային խլուրդներն» խորհրդային ռազմական մեքենայի կազմում

Եթե ամերիկյան ուժերը համառ դիմադրության հանդիպեցին Հնդկաչինյան պատերազմներում, ապա խորհրդային ռազմական մեքենան համանման փորձության ենթարկվեց Աֆղանստանում:

1979 թ. դեկտեմբերի 24-ին ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Ուստինովը ստորագրեց № 312/ 12/ 001 դիրեկտիվը, որից հետո՝ հաջորդ օրն առավոտյան, խորհրդային ռազմական ստորաբաժանումները մուտք գործեցին Աֆղանստան: Դեկտեմբերի 27-ին գրավվեց նախագահ Հ. Ամինի պալատը⁷:

¹ Միջինացված հաշվարկով յուրաքանչյուր գյուղացի պատրաստ և պարտավոր էր ամեն ամիս փորել 90սմ երկարության թունել: Ամենամեծ ցանցը հասնում էր շուրջ 200 մղոնի: Бригхэм Р., Краткая история Вьетнамской войны (http://artofwar.ru/f/foreign/text_0570-4.shtml) 25.03.2018

² D. Hank Ellison, Chemical warfare during the Vietnam war, Riot control agents in Combat, Routledge, N. Y., 2011, p. 41-57.

³ B-52 (Boeing B-52 Stratofortress) ինքնաթիռները հեռահար միջմայրցամաքային ռմակոծիչներ են, որոնք ԱՄՆ ռազմաօդային ուժերի կողմից սկսել են կիրառվել 1955 թ.: Սկզբնապես այն նախատեսված էր ԽՍՀՄ ցանկացած տարածք ջերմամիջուկային ռումբեր հասցնելու համար: Այս ինքնաթիռները լայնորեն կիրառվել են վիետնամական պատերազմի ողջ ընթացքում՝ ընդհանուր առմամբ իրականացնելով շուրջ 126 հազար թռիչք և կորցնելով 30 ինքնաթիռ: Lori S. Tagg, Development of the B-52, The wright field story, History Office, Aeronautical Systems Center, Air Force Materiel Command, 2004.

⁴ Հովհաննիսյան Ա., Ռազմարվեստ, հ. 1, Օդային գերակայություն, Ե., 2016, էջ 73-74:

⁵ Rotmann G. L., Tunnel rat in Vietnam, Osprey Publishing, 2012.

⁶ Սանրամասն տե՛ս Chris McNab, The Flamethrower, Osprey Weapon 41, 2015.

⁷ Ляховский А., Давитая С., ИГПА в Афганистан, М., 2009, с. 259-298.

Թվում էր՝ հակամարտությունը շատ արագ լուծվել է, սակայն դեպքերի հետագա ընթացքն այլ բան էր վկայում: Աֆղանստանը գնալով վերածվեց ջիհադական շարժման միջազգային թատերաբեմի¹:

Տեղի սուննիական բնակչությունը արագորեն կազմակերպեց անկանոն ստորաբաժանումներ, որոնք անվանվում են մոջահեդներ կամ դուշմաններ: Նրանց միավորող հիմնական գաղափարը պայքարն էր ընդդեմ անհավատ թշնամու: Մոջահեդները մեծ ծավալի օժանդակություն էին ստանում Արևմուտքից՝ մասնավորապես ԱՄՆ-ից:

Խորհրդային ուժերի օդային գերակայության մասին խոսելը կարծում ենք ավելորդ է: Ամենաարդյունավետն եղել է Су-25 ինքնաթիռը: Ինչ վերաբերում է ՀՕՊ հակազդեցությանը, ապա, ի տարբերություն Վիետնամի, խորհրդային օդուժը կարելի է ասել, որ չի հանդիպել էական որևէ դիմադրության²:

Քաջ գիտակցելով բաց ճակատով պայքարի անհնարինությունը՝ մոջահեդները որդեգրեցին ռազմական գործողությունների հետևյալ տեսակները՝

- գործերի դիրքերի ու բնակելի թաղամասերի հրետակոծություն ծանր հրետանուց,

- հարձակումներ գործերի պահակակետերի և ոչ մեծ կայազորերի վրա,
- դարանների կազմակերպում և ականապատում,
- տնտեսական օբյեկտներում դիվերսիոն ակտերի իրականացում,
- հարձակումներ կուսակցական և տնտեսական ապարատի ներկայացուցիչների վրա,

- ճանապարհային ցանցի ամբողջական խափանում³:

Խորհրդային հրամանատարությունը հենց սկզբից կանգնեց բավականին բարդ խնդիրների առջև: Նկատելի էր լեռնահրաձգային դիվիզիաների առաջացած բացը⁴: Բացի այդ՝ 40-րդ բանակի զինվորները ամենևին էլ պատրաստված չէին մարտեր մղել կատակոմբներում, որոնք տեղի բնակչությունը կիրառում էր տեղաշարժվելու և թաքնվելու համար: Միաժամանակ ջրային սակավ պաշարներ ունեցող շրջաններում առկա են ստորգետնյա ջրային կուտակումներ, որոնք մեծ նշանակություն ունեին և լայնորեն կիրառվում էին մոջահեդների կողմից⁵:

Խորհրդային զորքերը, ժամանակ չունենալով ստուգել բոլոր ջրհորները, քահրեզները և ստորգետնյա թաքստոցները, հաճախ ուղղակի պայթեցնում էին վերջիններս՝ փակելով նրանց մուտքը: Ընդ որում, պայթեցումն իրականացվում էր երկու պայթուցիկների միջոցով, որոնք տեղադրվում էին քահրեզի տարբեր մակարդակներում⁶: Միաժամանակ փորձ էր արվում նաև ստորգետնյա ուղիները այրել բենզինով և այլ դյուրավառ նյութերի օգնությամբ⁷: Հաճախ պայթուցիկ նյութերի կիրառումից բացի՝ «աշխատում էր» նաև հրետանին, որն ուղղակի ավերում էր տվյալ շրջանը⁸:

Իրենց հերթին մոջահեդները խուսափում էին դիմային հարվածներ հասցնել հակառակորդին՝ նախընտրելով թևանցիկ գրոհներով անցնել հակառակորդի թիկունքը:

¹ Աֆղանական պատերազմում իսլամական արմատական գաղափարների տարածման մասին մանրամասն տե՛ս Գրիգորյան Ս., Իսլամական պետություն, Ակունքներից մինչև խալիֆայության իռչակում, Ե., 2016, էջ 36-43:

² Марковский В., Штурмовики Су-25 в Афганистане, М., 2006, с. 3-4.

³ Սանրամասն տե՛ս Ali Ahmad Jalali, Lester W. Grau, The Other Side of The Mountain: Mujahideen tactics in the Soviet-Afghan War, Quantico, Va: U.S. Marine Corps, Studies and Analysis Division, 1999.

⁴ Հովհաննիսյան Ա., Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. Հեռանկարները, Ե., 2017, էջ 310:

⁵ Այդ մասին է վկայում Աֆղանական պատերազմի մասնակից գեներալ մայոր Եվ. Նիկիտենկոն, ով 1985-1987 թթ. եղել է խորհրդային 40-րդ բանակի օպերատիվ բաժնի շտաբի պետի տեղակալը: Никитенко Е., Бои в катакомбах Афгана// http://nvo.ng.ru/afgan/2001-11-16/2_afgan.html (09.05.2018)

⁶ Grau Lester W., The Bear Went Over the Mountain Soviet Combat Tactics in Afghanistan. Washington, D.C.: National Defense University Press, 1996, p. 44-47.

⁷ Бек А., Подземная война в Афганистане // «Солдат удачи». — 1997. — № 11.

<https://topwar.ru/2290-podzemnaya-vojna-v-afganistane.html> (09.05.2018)

⁸ Штейнберг М., “Туннельные крысы” Афгана// <https://inosmi.ru/world/20090326/248123.html> (09.05.2018)

Խորհրդային ուժերը կաղում էին արագաշարժության տեսանկյունից և հաճախ ուղղակի չէին հասցնում որսալ հակառակորդին¹:

Բնականաբար խորհրդային հրամանատարությունը արագորեն փորձ արեց փոխել իր մարտավարությունը՝ ստեղծելով փոքրաթիվ պատժիչ խմբեր, որոնք զինված էին հակազագերով, լապտերներով, ազդանշանային հրթիռներով և այլ նմանատիպ սպառազինությամբ²:

«Կատակոմբային խլուրդներն» «թունելային առնետների» նման ձախողվեցին: Հիմնական պատճառը տեղանքին անծանոթ և նմանատիպ գործողություններին անպատրաստ լինելն էր: Խորհրդային հրամանատարությունը ստիպված էր անգամ քիմիական զենք կիրառել: Այս մասին առկա են բազմաթիվ տեղեկություններ՝ ի հակառակ ժամանակի հերքումներին³:

Բնական պատսպարաններից և թաքստոցների բացի՝ մոջահեդները Վիետկոնգի նման կառուցում էին իրենց հատուկ ամրությունները, որոնցից ամենահայտնին Թորա-Բորան (Սև քարանձավ) էր: Այն 400 մ խորությամբ և 25 կմ ձգվածությամբ թունելային համակարգ էր և ղեկավարվում էր «Փեշավարյան յոթնյակի⁴» անդամ՝ դաշտային հրամանատար Մուհամադ Յունուս Խալիսի կողմից⁵:

Տասը տարվա անարդյունավետ երկարատև պայքարից հետո խորհրդային զորքերը դուրս բերվեցին Աֆղանստանից: Պատերազմում կրած կորուստների վերաբերյալ տարբեր գնահատականներ են տրվել: 1993 թ. գաղտնագերծված տվյալներով զոհված զինծառայողների թիվը կազմել է 14453 մարդ⁶:

Խորհրդային զորքերի դուրս բերումով աֆղանական խնդիրը չլուծվեց: Մինչ օրս էլ երկիրը քաղաքացիական պատերազմի թոհուրոհում է: 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկություններից հետո ամերիկյան ուժերն են արդեն պայքար մղում ահաբեկչական խմբավորումների դեմ: Հատկանշական է, որ Պենտագոնը հատուկ ուշադրության է արժանացրել քահրեզներում իրականացվող պայքարը և նախապատրաստական դասեր է վարում զինծառայողների շրջանում⁷:

Ամփոփում

Վիետնամական և Աֆղանական պատերազմների վերլուծությունը ցույց է տալիս, որ կանոնավոր բանակների դեմ կիրառվող անկանոն ստորաբաժանումների պայքարը որոշակի հաջողություններ էր արձանագրում:

Երկու պատերազմներն էլ ի սկզբանե վարվում էին սխալ մարտավարությամբ: Նկատելի էր գերտերությունների բացը անկանոն ռազմական գործողությունների նախապատրաստման հարցում: Դա լավագույնս դրսևորվեց տեղանքի առանձնահատկությունները հաշվի չառնելու և փոքրաթիվ միավորումներով գործելու անարդյունավետության մեջ:

¹ Feifer G., The Great Gamble: The Soviet War in Afghanistan, New York, 2009, p. 120-152.

² Виниченко М., Подзенная вооружённая борьба// Армейский сборник : журнал, 2014, Апрель (т. 238, № 4), с. 8-13.

³ Grau Lester W., The Soviet-Afghan War: How a Superpower Fought and Lost, Kansas, 2002, p. 255-264.

⁴ «Փեշավարյան յոթնյակը» (պաշտոնական անվանումը «Աֆղանստանի մոջահեդների իսլամական միություն») ռազմա-քաղաքական միություն էր, որն հիմնվել էր 1982 թ. պակիստանի Փեշավար քաղաքում: ԱՄՆ հատուկ ծառայությունները, մասնավորապես ԿՀՎ-ն, «Ցիկլոն» ռազմագործողության շրջանակներում երկար տարիներ ֆինանսավորում էին «Փեշավարյան յոթնյակին» ԽՍՀՄ դեմ պայքարում: Robert D. Billard, Jr., Operation Cyclone: How the United States Defeated the Soviet Union// Undergraduate Research Journal at UCCS Volume 3.2, October 2010, p. 25-39.

⁵ Peter John Paul Krause, The Last Good Chance: A Reassessment of U.S. Operations at Tora Bora, Security Studies, Vol.17, No. 4 (Winter 2008), p. 645-646.

⁶ Гриф секретности снят. Потери вооруженных сил СССР в войнах, боевых действиях и военных конфликтах: Стат. исследование / Под ред. к.в.н. генерал-полковника Г. Ф. Кривошеина М.: Воениздат, 1993.

⁷ Хадаренок М., США готовятся к войне в подземельях, <https://www.gazeta.ru/army/2017/05/01/10651967.shtml> (09.05.2018)

Պատերազմները առանձնացան նաև իրենց տեղեկատվական բաղադրիչով: Հաղթանակներ տանելով մարտադաշտում՝ կառավարությունները տեղի էին տալիս «Վիետնամական» և «Աֆղանական» սինդրոմների ներքո:

Անկանոն ստորաբաժանումների դեմ իրականացվող պայքարի ուսումնասիրությունը կարևորվում է նաև ներկայումս: Արդի ահաբեկչական խմբավորումները նախընտրում են հենց վերոնշյալ մարտավարությունը: Հաշվի առնելով տարածաշրջանային զարգացումները՝ այդ մարտավարությունը ուսանելի է հայկական զինված ուժերի համար:

Гурген Мурадян, Подземные (тоннельные) военные операции во время войн во Вьетнаме и Афганистане: сравнительный анализ. В статье автор рассматривает проблемы ведения подземных военных действий во время локальных конфликтов во Вьетнаме и Афганистане. Дается сравнительный анализ борьбы американцев в туннелях Ку-чи с действиями советских солдат в катакомбах Афганистана.

Выше перечисленные две войны очень похожи по своей сути. Сверхдержавы холодной войны имея колоссальную гегемонию и доминацию в воздушной войне, так и не смогли подавить сопротивление таких нерегулярных военных соединений, какими были Национальный фронт освобождения Южного Вьетнама (Вьетконг) и моджахеды.

Изучение опыта борьбы против нерегулярных военных соединений имеет ценную пользу для ведения сегодняшних операций против террористических и диверсионных групп.

Ключевые слова: нерегулярные соединения, партизанская борьба, вьетнамский синдром, джихад, воздушное превосходство, геополитические конфликты.

Gurgen Muradyan, Underground (tunnel) military operations during the wars in Vietnam and Afghanistan: comparative analysis. In the article the author considers the problems of conducting underground military operations during local conflicts in Vietnam and Afghanistan. A comparative analysis of the American struggle in the Ku-chi tunnels with the actions of Soviet soldiers in the catacombs of Afghanistan is given.

The above mentioned two wars are very similar in nature. The superpowers of the Cold War, with colossal hegemony and domination in the air war, were never able to suppress the resistance of such irregular military formations as the National Liberation Front of South Vietnam (Vietcong) and the Mujahedeen.

Studying of the experience the struggle against irregular military formations has valuable usefulness for conducting today's operations against terrorist and sabotage groups.

Key words: irregular forces, guerilla warfare, Vietnamese syndrome, jihad, air domination, geopolitical conflicts.